ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ծննդյան 75-ամյակի առթիվ)

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1958 թ.՝ ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում: Իր գիտական աշխատանքային գործունեությունը սկսել է ՀԳԱ Բյուրականի աստղադիտարանում, ապա Աշտարակում՝ ՀԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի նո-րաստեղծ ինստիտուտում: Աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վ. Համբարձումյանի առաջարկությամբ Ռ. Մարտիրոսյանը 1960 թ. մեկնում է Մոսկվա և ընդունվում ԽՍՀՄ ԳԱ Պ. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Այստեղ Նոբելյան մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ա. Պրոխորովի ղեկավարությամբ սկսվում է խոստումնալից գիտնականի հետազոտական արդյունավետ գործունեությունը: Այդ տարիներին Ռ. Մարտիրոսյանը կատարել է մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ: Նա ռադիոաստղագիտական հետազոտություններում քվանտային ուժեղացուցիչների կիրառման գործում առաջիններից մեկն է:

Ռ. Մարտիրոսյանը, 1964 թ. հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը, վերադառնում է Աշտարակ՝ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ: Երիտասարդ գիտնականը ստացել էր գալակտիկայի հետ կապված նոր արդյունքներ, ուստի Վ. Համբարձումյանը նրան խորհուրդ է տալիս այդ աշխատանքները շարունակել հիշյալ ինստիտուտում: Այդ նպատակով ՀԳԱ նախագահության որոշմամբ ինստիտուտում ստեղծվում է քվանտային ուժեղացուցիչների լաբորատորիա՝ Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ: 1970 թ. նա նշանակվում է ինստիտուտի տնօրենի՝ գիտական աշխատանքների գծով տեղակալ: 1980-ից առ օրս նա գիտական այդ հիմնարկի տնօրենն է: Նրա ջանքերով ինստիտուտում հիմնադրվեց գիտական նոր ուղղություն: Ռ. Մարտիրոսյանի գիտական հետազոտությունների հետ է կապված նաև էներգետիկ մակարդակների գերբնակեցման նոր սխեմաների հայտնաբերումը:

Ռ. Մարտիրոսյանը 1980 թ. հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը: 1984-ին նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Գիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ ավանդի համար Ռ. Մարտիրոսյանը 1986 թ. ընտրվում է ՀԳԱ թղթակից անդամ, իսկ 1990-ին՝ ակադեմիկոս:

Անվանի ակադեմիկոսի գիտական ղեկավարությամբ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում ստեղծված բարձր զգայնության ռադիոընդունիչ սարքերը լայնորեն կիրառվել են բնական պաշարների հետազոտման «Բնություն» և «Օվկիանոս» տիեզերական ծրագրերում, ինչպես նաև ռադիոաստղագիտական և բժշկակենսաբանական հետազոտություններում: Առանձնապես նշանակալի է Ռ. Մարտիրոսյանի մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրություններին նվիրված ծրագրերին, և անգնահատելի է նրա ավանդը այդ բնագավառում:

Ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը միջազգային գիտական հանրության կողմից ըստ արժանվույն գնահատված գիտնական է: Նա 200-ից ավելի գիտական աշխատանքների և երեք մենագրությունների հեղինակ է, որոնցից երկուսը հրատարակվել են ԱՄՆ-ում և Շվեդիայում: Ռ. Մարտիրոսյանը 1965 թ. ի վեր դասավանդում է Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետում: Նրա նախաձեռնությամբ 1983 թ. այդ ֆակուլտետում կազմակերպվել է գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի ամբիոն, որը նա ղեկավարել է մինչև 1986 թ.: Մեծավաստակ գիտնականը Երևանի պետական համալսարանի ռեկտորն էր 1993-2006 թթ.: Այդ ընթացքում գիտական-մանկավարժը հանդես է եկել որպես մայր բուհի հմուտ ղեկավար և եռանդուն կազմակերպիչ:

Ռ. Մարտիրոսյանը նշանակալի ներդրում ունի միջազգային գիտակրթական և մշակութային կառույցների հետ արդյունավետ համագործակցության բնագավառում, որ հետագայում առավել ընդլայնվեց հանրապետության ակադեմիական համակարգի և այդ կառույցների փոխադարձ առնչություններով: Տարիներ շարունակ նա եղել է համալսարանների միջազգային և համաեվրոպական ընկերակցությունների խորհուրդների լիիրավ անդամ, Հայաստանի պետական բուհերի ռեկտորների խորհրդի նախագահ:

Վերջին տարիներին ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ և գործուն մասնակցությամբ լուրջ քայլեր արվեցին ակադեմիական հանրության համախմբման, ՀՀ ԳԱԱ համակարգի և նրա ներուժի պահպանման գործում: Դրանք ներառում են օրենսդրական ծրագրի իրականացման, հեռանկարային գիտական ուղղությունների ճշգրտման, գիտության մեջ երիտասարդ գիտաշխատողների առաջշարժման, միջազգային համագործակցության, նոր տեխնոլոգիաների ներդրման և այլ ոլորտներ: Մշակվել և Ազգային ժողովի կողմից ընդունվել է ՀՀ ԳԱԱ-ի մասին օրենքը և ճշտվել նրա հատուկ կարգավիճակը: Գիտակրթական, կազմակերպչական ու մանկավարժական ներհուն գործունեության և ակնառու ձեռքբերումների համար Ռ. Մարտիրոսյանն արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարական բարձր պարգևների, նրան շնորհվել են բազմաթիվ մեդալներ ու շքանշաններ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանին շնորհավորում ենք ծննդյան 75-ամյակի առթիվ և մաղթում արևշատություն ու հաջողություններ՝ իր ստանձնած հույժ պատասխանատու առաքելության իրականացման, ինչպես և ամբողջ ակադեմիական համակարգի ղեկավարման պատվավոր աշխատանքներում:

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»
հանդեսի խմբագրություն, խմբագրական խորհուրդ